

6.2%-ի: Աղյուսակում ներկայացված մյուս երկու ցուցանիշները՝ ՀՆԱ-ում գյուղատնտեսության ու ագրոպարենային համակարգի մասնաբաժինները, կանոնավոր կերպով նվազել են, և եթե 2001 թվականին ՀՆԱ-ում գյուղատնտեսության ու ագրոպարենային համակարգի մասնաբաժինները համապատասխանաբար կազմել են 25.0 և 32.8 %, ապա 2006-ին՝ 17.7 և 22.5 %:

Ներկայիս պայմաններում ՀՀ բանկային համակարգի զարգացումը պահանջում է ինչպես արտասահմանյան երկրների զարգացած բանկային համակարգերի և առհասարակ բանկային գործունեության (Կենտրոնական բանկ և առևտրային բանկեր) փորձի անընդհատ ուսումնասիրություն, այնպես էլ մեր կողմից արդեն կուտակված փորձի մանրակրկիտ ուսումնասիրություն, որի արդյունքում հնարավոր կլինի ՀՀ բանկային օրենսդրությունը համապատասխանեցնել համաշխարհային զարգացումներին և տնտեսապես ինտեգրվել տարբեր միջազգային կազմակերպությունների:

ՋԱԿԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ. Զոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ՀԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ

Հարկ հասկացության արմատները մեզ տանում են դարերի խորքը և արտահայտում են այդ կարևոր երևույթի ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական ու քաղաքական օրինաչափությունները:

Ժամանակի հետ հասարակության մեջ պահանջմունք առաջացավ տեսագիտական հիմքերի վրա փոխադրելու հարկագրությունը: Եվ պատահական չէ, որ գրեթե բոլոր տնտեսագիտական դպրոցները անդրադարձել են հարկման խնդրին: Անժխտելի է, որ հարկերն իրենց գոյության սկզբից էլ եղել են դասակարգային շահերի, սոցիալական տարբեր խավերի պայքարի ամենավառ դրսևորումներից մեկը, սակայն ոչ մի տնտեսագիտական դպրոց չի ժխտում հարկերի դերը պետության գոյատևման գործում: Չնայած հարկային քաղաքականության վերաբերյալ նրանց տարբեր մտեցումներին՝ այնուամենայնիվ, բոլոր տնտեսագետների մոտ ամենավիճահարույց հարցերից մեկը հարկերի արդարացի գանձման հիմնախնդիրն է:

19-րդ դարի երկրորդ կեսին շատ պետություններ սկսեցին գիտական ձեռքբերումները, նորամուծությունները լայնորեն կիրառել գործնական կյանքում: Սակայն, ինչպես նշում է ռուս տեսաբան Վ. Պուշկարևան. «Ֆինանսական գիտության զագաթնակետը Առաջին համաշխարհային պատերազմից հետո իրականացված հարկային բարեփոխումներն էին, որոնք ամբողջությամբ հիմնավորված էին հարկման գիտական սկզբունքներով: Եվ հենց այս ժամանակ դրվեցին ժամանակակից հարկային համակարգի կառուցվածքային հիմքերը, որում ուղղակի հարկերը և առաջին հերթին՝ պրոգրեսիվ եկամտահարկը, զբաղեցրին առաջատար դիրք»¹:

Հայտնի են հարկման մասին ընդհանուր և մասնավոր տարբեր տեսություններ: Ընդհանուր տեսություններն անդրադառնում են հարկերի դերին և տեղին հասարակության կյանքում, հարկման համընդհանուր նշանակությանը, հարկման ազդեցությանը տնտեսության, նրա առանձին ճյուղերի վրա, իսկ հարկման մասնավոր տեսությունները ներառում են գիտական հայացքներ հարկման մեխանիզմների, հարկային համակարգի առանձին տարրերի վերլուծության, նրանց փոխհարաբերակցության և այլնի վերաբերյալ: Այժմ համառոտ անդրադառնանք այս տեսություններից մի քանիսին:

¹ Пушкарёва В. "История финансовой мысли и политика налогов". Москва 1996г., стр.74.

Միջին դարերում ձևավորվեց հարկման փոխանակման տեսությունը, որը համարվում է ամենավաղ շրջանի տեսություններից մեկը: Ըստ այս տեսության կողմնակիցների՝ հարկը մի յուրահատուկ փոխանակության միջոց է պետության կողմից կատարված ծառայությունների դիմաց, այսինքն՝ քաղաքացիները հարկերի միջոցով է պետությունից գնում են որոշակի ծառայություններ, օրինակ՝ հասարակական կարգուկանոնի պահպանում, արտաքին և ներքին թշնամիների ոտնձգություններից պաշտպանվածություն և այլն: Փաստորեն, այս տեսությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ հարկերն ունեն հատուցելիության բնույթ, այսինքն՝ որոշ առումով հակասում է հարկերի վերաբերյալ ձևավորված որոշ պատկերացումներին, քանի որ տնտեսագիտական գրականության մեջ հաճախ է նշվում, որ հարկերը անհատույց վճարներ են: Կարելի է նշել, որ այս տեսությունն առավել բնորոշ է միջին դարերին:

Փոխանակման տեսության տարատեսակ է ատոմիստական տեսությունը, որը ծագել է Ֆրանսիայում XVII-XVIII դարերում: Այս տեսության հիմնադիրներից են Սեբաստիան Լե Պոետր Վոբանը և Շառլ Լուի Մոնտեսքյոն: Նրանք այն կարծիքին են, որ հարկը փոխադարձ պայմանավորվածություն է պետության և քաղաքացիների միջև: Համաձայն այդ պայմանավորվածության՝ քաղաքացին, վճարելով հարկերը, ապահովում է իր անձնական և գույքային անվտանգությունը, պետական մակարդակով պաշտպանվածությունը և այլն: Ս. Վոբանը գրում է. «Բոլորի համար պարզ է և հասկանալի, որ հարկատուները զգում են իրենց պաշտպանության անհրաժեշտությունը, առանց որի անհնար է գոյատևել»¹:

Բոլորի համար պարզ է, որ անհնար է հրաժարվել հարկ վճարելուց, հետևաբար, անհմաստ է և անհեթեթ հրաժարվել պետության ծառայություններից, քանի որ, ինչպես նկատել է Ի. Կուլիշերը. «Չնայած հարկի դիմաց պետության մատուցած ծառայությունները ոչ միշտ են լինում արդարացի, այնուամենայնիվ, այս փոխանակությունը ընդհանուր առմամբ կարելի է համարել շահավետ, քանի որ ամենաթույլ պետությունն էլ շատ ավելի արդյունավետ և էժան կարող է պաշտպանել իր քաղաքացու շահերը, քան քաղաքացին ինքը»²: Այս տեսության համախոհներից Օնորե Միրաբոն հարկը համարում է հասարակական կարգի պաշտպանության համար կատարվող վճար, իսկ Ֆրանսիացի փիլիսոփա Վոլտերի կարծիքով հարկի վճարումը գույքի մի մասի տրամադրումն է և մյուս մասի պահպանումը: Ասվածից հետևում է, որ ատոմիստական տեսության հիմնական մեխն այն գաղափարն է, ըստ որի հարկը պետության կողմից իր քաղաքացիների պաշտպանվածության ապահովման արժեքն է:

XVIII դարում ծնվեց մի գաղափար, համաձայն որի հարկը մի յուրատեսակ ապահովագրական վճար է, որ վճարում են քաղաքացիները պետությանը՝ դրանով իսկ ապահովագրելով իրենց սեփականությունը պատերազմներից, գողությունից և այլն, որով հիմք դրվեց հարկի՝ որպես ապահովագրական պարգևավճարի տեսությանը: Ըստ այս տեսության՝ հարկերը, ի տարբերություն սովորական ապահովագրական վճարների, որոնք ակնկալում են ապահովագրական փոխհատուցումներ, վճարվում են պետության կողմից հասարակական կարգուկանոնի պահպանման, պաշտպանության, անվտանգության, իրավակարգի ապահովման ֆինանսական ծախսերը հոգալու նպատակով: Այս գաղափարները XIX դարում զարգացրեց ֆրանսիացի տնտեսագետ Ադոլֆ Տիերը: Այս տեսության համախոհներից էին անգլիացի Ջոն Ռամսեյ Մակ-Կուլլոխը, որը նաև Անգլիայի կառավարության անդամ էր, ֆրանսիացի տնտեսագետ Է. Դ. Ժիրարդեն: Ըստ Ժիրարդեի՝ «Հարկերը հասարակության համար համարվում են հուսալի հենարան, այսինքն՝ քաղաքացին, կատարելով ապահովագրական վճարներ, ապահովագրվում է ցանկացած ռիսկից, որ կարող է խանգարել նրան սեփական գույքի տնօրինման և օգտագործ-

¹ Пушкарёва В.М. "История финансовой мысли и политика налогов". Москва 1996г., стр. 59.

² Кулишер. И.М. "Очерки финансовой науки" Петроград, 1919г., стр. 77.

ման ժամանակ»¹: Այս տեսության գաղափարը հիմնված է այն դրույթի վրա, որ ի տարբերություն ապահովագրական վճարի՝ հարկերի գանձումը կատարվում է հարկադրման սկզբունքով:

Բավարարվածության տեսության հիմնադիրն է շվեյցարացի տնտեսագետ Ժան Սիսմոնդ դե Սիսմոնդին: Այս տեսության համաձայն՝ հարկը համարվում է վճարում, որը կատարվում է բավարարվածություն ստանալու համար: Սիսմոնդին գրում է, որ քաղաքացին բավարարվածություն ստանում է լավ ճանապարհներից, մաքուր և կանաչ այգիներից, թարմ օդից, մաքուր ջրից, որը ձեռք է բերվում հասարակական աշխատանքի շնորհիվ: Սակայն կարելի է բավարարվածություն ստանալ նաև հասարակական կարգի պահպանումից, ազգային անվտանգությունից, սեփականության պաշտպանվածությունից, արդարությունից, որը ձեռք է բերվում հարկերի օգնությամբ²: Սիսմոնդին նույնպես հակված է այն կարծիքին, որ հարկը հիմնված է հատուցելիության սկզբունքի վրա: Իր «Քաղաքատնտեսության նոր սկզբունքները» աշխատության մեջ նա գրել է. «Հարկերի օգնությամբ յուրաքանչյուր վճարող գնում է ոչ այլ ինչ, քան բավականություն: Բավականություն նա ստանում է հասարակական կարգի պահպանումից, անձի և սեփականության պաշտպանությունից և այլն»³:

Հարկման դասական տեսության հիմքերը դրվել են այս դպրոցի ներկայացուցիչներ Ա. Սմիթի, Ֆ. Բենեթի, Ու. Պետտիի, Ժ. Բ. Սեյի, Դ. Ռիկարդոյի, Ջ. Միլի աշխատություններում, որոնց կարծիքով տնտեսությունը ինքնակարգավորվող համակարգ է, որտեղ պահանջարկը ծնում է առաջարկ, իսկ հարկերի դերն ընդամենը պետության բյուջեի եկամտային մասն ապահովելն է, սակայն վերջիններս չպետք է ծանրություն լինեն քաղաքացիների համար:

Հարկերի մասին առավել ամբողջական տեսության ստեղծմանը լուրջ ուշադրություն դարձվեց 18-րդ դարի երկրորդ կեսին: Հայտնի տնտեսագետ և փիլիսոփա Ադամ Սմիթը 1776 թվականին հրատարակված «Հետազոտություն ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների մասին» աշխատությունում առաջին անգամ ձևակերպել է հարկման սկզբունքները, տվել հարկային վճարումների սահմանումը, նշել դրանց տեղն ու դերը երկրի ֆինանսական համակարգում, ինչպես նաև սահմանել, որ հարկերը հարկատուի համար ազատության և ոչ թե ստրկության ցուցանիշ են⁴:

Սմիթը գրում է, որ պետության հարկատուներն իրենց հնարավորության և կարողության սահմաններում պետք է մասնակցեն կառավարության պահպանմանը, այսինքն՝ այն եկամտին համապատասխան, որը նրանք վատնակում են պետության հովանու և պաշտպանության ներքո: Հարկը, որ պարտավոր է վճարել յուրաքանչյուր քաղաքացի, պետք է լինի հստակ սահմանված, առանց որևէ կամայականության, վճարելու ժամկետն ու եղանակը, վճարվող գումարը պետք է լինեն պարզ ու որոշակի և՛ վճարողի, և՛ ցանկացած այլ անձի համար: Այնտեղ, որտեղ այս պայմանները բացակայում են, հարկվող յուրաքանչյուր անհատ այս կամ այն չափով հանձնվում է հարկահավաքի իշխանությանը, որը կարող է իր համար անցանկալի վճարողի հարկը ծանրացնել կամ էլ ծանրացման սպառնալիքով իր համար ներառել նվեր կամ կաշառք⁵:

Ա. Սմիթը հարկը համարում է քաղաքացիների եկամուտների մի մասի քիչ թե շատ կանոնակարգված և կայուն կերպով գանձվող վճար: Նա առաջինն էր, որ հստակ ձևակերպեց հարկման չորս հիմնական սկզբունքները՝ արդարության, որոշակիության, հարմարության և տնտեսման, որոնք որոշակի փոփոխություններով և ժամանակակից պահանջներին համապատասխան օգտագործվում են նաև մեր ժամանակներում: Այս սկզբունքները կարելի է համեմատել նաև աստվածաշնչյան տաս պատվիրանների հետ, որոնցով առաջնորդվելով պետք է ապրի յուրա-

¹ Пушкарёва В. "История финансовой мысли и политика налогов". Москва 1996г., стр.60.

² Ж. Сисмонд де Сисмонди "Новые начала политекономии", СОЦЭК-ГИЗ, Москва, 1937г., стр 135.

³ " Финансы и кредит" 14 (104) -2002, июль, с. 63.

⁴ Смит А. "Исследование о природе и причинах богатства народов", Москва, СОЦЭК-ГИЗ, 1962г., стр 341.

⁵ Смит А. "Исследование о природе и причинах богатства народов", Москва, СОЦЭК-ГИЗ, 1962г., т. 2, стр 341-343.

քանչյուր մարդ¹: Ցանկացած արդյունավետ հարկային համակարգ պետք է բավարարի վերը նշված սկզբունքները: Արդյունավետությունն այժմ ձևակերպվում է այլ կերպ. առաջին հերթին պետք է հաշվի առնել հարկատուի կողմից կատարվող այն ծախսերը, որոնք կապված են հարկային հաշվառման և հարկային հաշվետվությունների ներկայացման հետ: Հասկանալի է, որ առաջ այսպիսի ծախսերը շատ փոքր տոկոսային հարաբերակցություն ունեն, որը չի կարելի ասել ժամանակակից հարկային համակարգի մասին: Նմանատիպ հարցերի լուծման համար քաղաքացիների ու ձեռնարկությունների ծախսերը շատ մեծ են և հաճախ հասնում են վճարվելիք հարկի մեծության գումարին: Ներկայումս մի շարք արևմտյան երկրներում հարկատուների այս ծախսերը վերահսկվում են խստորեն: Պետք է նկատի ունենալ նաև հարկային մարմինների՝ օրեցօր աճող այն ծախսերը, որոնք կապված են հարկային օրենսդրության բարդացման, հարկային դրույքների աճին գուգահեռ՝ հարկային վերահսկողության ուժեղացման և խստացման, հարկային մարմիններում աշխատողների թվաքանակի մեծացման և նրանց՝ նորագույն տեխնիկական սարքավորումներով ապահովման հետ: Եթե նախկինում պետությունը հարկերի հավաքագրման վրա ծախսում էր հավաքվող գումարի 25-30%-ը, ապա ներկայումս դա կազմում է 5-7%: Օրինակ, Արևմտյան Եվրոպայում ավելացված արժեքի հարկի գանձման ժամանակ կատարվող ծախսերը չեն գերազանցում հավաքվող հարկի գումարի 2.5-3%-ը, սակայն բնակչությունից եկամտահարկի գանձման ժամանակ կատարվող ծախսերը կարող են հասնել հավաքվող հարկի գումարի 10%-ի և ավելի²: Ա. Սմիթն այն կարծիքին էր, որ շատ ստացողը պետք է նաև շատ վճարի: Սա բխում է նրա արդարության սկզբունքից, այսինքն՝ անհրաժեշտ է հարկային բեռը բաշխել հարկատուների միջև՝ կախված նրանց եկամտի մեծությունից:

Ա. Սմիթը գրում է. «Յուրաքանչյուր հարկ պետք է գանձվի այն ժամանակ և այն եղանակով, որ դրա վճարելը հարկատուի համար առավել հարմարավետ լինի: Հարկման անորոշությունը աջակցում է կաշառակերությանը և զարգացնում հարկահավաքների «կտիությունը»: Յուրաքանչյուր հարկ պետք է լինի այնպես մտածված ու մշակված, որպեսզի դրա գանձելը, ժողովրդի գրպանից պահելը լինի ավելի մկազ, քան դա բերում է պետական գանձարանին»³: Ա. Սմիթը հարկային տեսության հիմքում դնում է հարկերի՝ ըստ ստացված եկամուտների սահմանման սկզբունքը: Այս ձևն օգտագործվում է աշխարհի շատ երկրներում: Ի տարբերություն հարկերին վերաբերող այլ տեսությունների, համաձայն որոնց հարկերի չափը պետք է որոշվի պետության կողմից քաղաքացիներին մատուցված ծառայություններին և ստացած օգուտներին համապատասխան (այս մեթոդի կիրառումը գործնականում շատ դժվար է), այս սկզբունքն ավելի կիրառելի է և պրակտիկ, որի էությունը «ըստ վճարումնակության» հարկումն է, այսինքն՝ հարկվող գումարը պետք է թիսի հարկատուի եկամտի չափից: Այս սկզբունքի հիմնական էությունը պրոգրեսիվ հարկումն է: Ինչպես Վ.Ի. Լենինն է գրել. «Որքան աղքատ է մարդը, այնքան մա իր եկամտից ավելի շատ բաժին է տալիս պետությանը»⁴: Այստեղ պետք է հաշվի առնել նաև հորիզոնական արդարության սկզբունքը, այսինքն՝ նույն իրավիճակում գտնվող հարկատուները պետք է լինեն հավասար պայմաններում:

Շարունակելով Ա. Սմիթի գաղափարները՝ Դ. Ռիկարդոն գրում է. «Հարկերն ունեն այն սկզբունքը, ինչ պտղատու հողը, վատ եղանակը, ակտիվության բացակայությունը, աշխատուժի վատ բաշխումը, հաստոցների կորցնելը: Չկան հարկեր, որոնք, թերևս, չեն արգելակում կուտակումներին, չեն խանգարում արտադրությանը»⁵:

Դ. Ռիկարդոն առաջինն էր, որ ուսումնասիրեց հարկերի տնտեսական էությունը: Ըստ նրա՝ «Հարկը կազմում է նոր ստեղծված ապրանքի ու աշխատանքի այն բաժինը, որը գտնվում է

¹ Юткина Т. Ф. Налоги и налогообложение: Учебник.- М.: ИНФРА-М, 1998 с.32.

² "Налоговая политика России на современном этапе", М.Бобоев, В.Кашин, Вопросы экономики-# 7. 2002, с.56.

³ Смит А. "Исследование о природе и причинах богатства народов", Москва, СОЦЭК-ГИЗ, 1962г., стр 341-343.

⁴ Ленин В. И. "Полн. Собр. Соч."-Т.6, с.262.

⁵ Алексеевко М.М. "Взгляд на развитие учения о нологе", Харьков, 1870г., стр 74.

կառավարության տրամադրության տակ, և այն միշտ վճարվում է, վերջին հաշվով, կապիտալից կամ երկրի եկամտից»¹:

Ռուս տնտեսագետ Ն. Ի. Տուրգենևը առաջ քաշեց հարկերի սահմանման և ներդրման յուրահատուկ կանոններ, որոնք կոչվեցին հարկման մեթոդաբանություն, որի հիման վրա էին սահմանվում հարկերը շատ երկրներում: Տուրգենևը գտնում էր, որ կան հարկերի սահմանման հինգ կանոններ.

- հարկերի համաչափ բաշխման կանոնը, ըստ որի հարկերը պետք է բաշխվեն բոլոր վճարողների միջև համաչափորեն՝ կախված նրանց եկամուտների մեծությունից,
- հարկերի որոշակիության կանոնը, ըստ որի հարկերը և դրանց հարկման համար անհրաժեշտ բոլոր տարրերը պետք է հստակ սահմանված լինեն,
- հարկերի գանձման հարմարավետության կանոնը, որը ենթադրում է հարկերի վճարման ժամկետների և այլ պայմանների առկայությունը, որն ամենահարմարն է հարկատուի համար,
- հարկային բեռի ծանրության ուղղվածությունը հիմնականում դեպի զուտ եկամուտը, քանի որ, ըստ Տուրգենևի, հարկը գլխավորապես պետք է գանձել զուտ եկամտից և ոչ թե հենց կապիտալից,
- հարկերի «էժան» գանձման կանոնը, համաձայն որի հարկագանձումը պետք է իրականացվի առավել քիչ ծախսերով²:

Ամերիկացի տնտեսագետ Պ.Սամուելսոնը գտնում էր. «Հարկերի կառուցվածքը պետք է այնպիսին լինի, որ եկամուտները շուկայական համակարգի միջոցով և համապատասխան ձևով բաշխվեն ի շահ հասարակության»³:

Քանի որ անհնար է որոշել հարկատուի հարկ վճարելու ունակության չափը և այս մասին չկա որևէ գիտական մոտեցում, Սամուելսոնը գրում է. «Պրակտիկայում այս հարցի պատասխանը կառուցվում է կանխատեսումների և գուշակումների վրա՝ կախված հարկման հիմնախնդրի նկատմամբ դեկլարող կուսակցության հայացքներից, պահի և եկամուտների նկատմամբ կառավարության պահանջներից»⁴:

Ըստ ֆրանսիացի իրավագետ Պոլ Մարի Գոդմեի՝ «հարկն ունի միայն մեկ նպատակ, այն է՝ պետական ծախսերի ֆինանսավորումը: Տնտեսական հարաբերությունների զարգացումը բերելու է նաև հարկման դասական տեսության վերափոխմանը և արժեզրկմանը»⁵: Կարելի է համաձայնել Գոդմեի այս մտքի հետ, քանի որ ժամանակակից հարկային հարաբերություններում դասական տնտեսագիտության գաղափարների կիրառությունն ունի նվազման միտում:

Հարկերի էության, հասարակության համար նրանց դերի ու նշանակության վերաբերյալ բավականաչափ ծավալուն և լուրջ հետազոտություն է արվել նաև Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի կողմից: Նրանք այն կարծիքին են, որ հարկերը մեծագույն չափք են և աշխատավոր դասակարգին շահագործելու մի ձև: Նրանք, սակայն, հարկերին առաջնային տեղ էին տալիս շուկայական տնտեսության պայմաններում: Նրանք քննադատում էին անուղղակի հարկերը՝ համարելով դրանք ծանր և անարդյունավետ, բայց կարևոր էին համարում ուղղակի հարկերի, հատկապես եկամտահարկի դերը՝ համարելով այն առաջադիմական⁶:

Հետաքրքիր է նաև դասական տնտեսագիտությանը հակադրվող քեյնսյան դպրոցի ներկայացուցիչների դիրքորոշումը հարկերի վերաբերյալ: Ըստ այս տեսության՝ հարկերը պետության կողմից տնտեսության կարգավորման հիմնական գործիքներն են, ինչպես նաև տնտեսական ան

¹ Рикардо Д. "Начало политэкономии и налогового обложения", Москва, Политиздат, 1955г., т 1, стр. 360.

² Тургенев Н.И. "Опыт теории налогов", Москва 1937г.

³ Самуелсон П. Экономика, МГП. АЛГОН ВНИСИ 1992, Т.1, стр.166.

⁴ Макконел К., Брю С. Экономикс, принципы, проблемы и политика, М. Республика, 1992г.

⁵ Годме П. "Финансовое право", Москва, Прогресс 1978г., стр. 383-384.

⁶ Маркс К., Энгельс Ф., "Сочинения", 2-е издание, т. 7, стр. 83.

ապահովող կարևոր գործոն: Տնտեսագիտական գրականության մեջ շատ մեծ արժեք ունի այս տեսության հիմնադիր Ջոն Մեյնարդ Բեյնսի՝ «Զբաղվածության, փողի և տոկոսի ընդհանուր տեսություն» աշխատությունը, որտեղ հեղինակը նշում է. «Պետությունը պետական ծախսերի, փոխառվական տոկոսի կարգավորման ու հարկերի միջոցով կարող է նպաստել վճարունակ պահանջարկի և արտադրության ծավալների միջև համապատասխանության ստեղծմանը, սպառելու ձգտման վրա կարող են ազդել կապիտալի արժեքի անկանխատեսելի փոփոխությունները, ինչպես նաև լուրջ փոփոխությունները տոկոսադրույքի և հարկային քաղաքականության մեջ»¹: Ջ. Բեյնսն այն կարծիքին էր, որ եթե երկրում առկա լինի լրիվ զբաղվածություն, ապա տնտեսական աճն ուղղակիորեն կախված կլինի դրամական խնայողություններից, բայց քանի որ լրիվ զբաղվածության երևույթը գործնականում անհնար է, ուստի որքան մեծ է խնայողության չափը, այնքան դրանք դուրս են մնում արտադրության պրոցեսից, և, բնականաբար, փոքրանում է հարկման բազան: Այս ամենից հեղինակը կատարում է եզրահանգում, համաձայն որի ավել խնայողության մասը պետք է բռնագանձվի հարկերի միջոցով և ուղղվի դեպի արտադրության ոլորտ²: Այս տեսության հիմնական գաղափարներից մեկն էլ պրոգրեսիվ հարկման սկզբունքն է, որի ելակետային հիմնադրույթներից էր ցածր եկամուտների ազատումը եկամտահարկից, իսկ միջին և բարձր եկամուտների հարկումը՝ պրոգրեսիվ սանդղակով: Ջ. Բեյնսի կարծիքով ցածր հարկադրույթները կրճատում են պետական բյուջեի եկամտային մասը՝ դրանով իսկ նպաստելով տնտեսական անկայունության խորացմանը³: Հետպատերազմյան տարիներին աշխարհում շատ երկրներ իրենց հարկային քաղաքականությունը կառուցել են քեյնսյան տեսության գաղափարների հիման վրա:

Մոնետարիզմի հարկային տեսության հիմնադիրն է ամերիկացի տնտեսագետ, Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր Միլթոն Ֆրիդմանը: Այս տեսության համախոհները հարկերին չեն վերագրում այն կարևոր դերը, ինչ քեյնսականները: Ըստ նրանց՝ հարկերի հիմնական դերակատարումը շրջանառությունից ավելցուկային դրամական զանգվածի դուրս բերումն է: Համաձայն այս տեսության՝ փողի ավելցուկային ծավալը շրջանառությունից կարող է հանել պետությունը, եթե ոչ փոխառությունների, ապա հարկերի օգնությամբ⁴: Ե՛վ քեյնսյան, և՛ մոնետարիզմի տեսությունների ներկայացուցիչները կարևորում են այն փաստը, որ երկրի տնտեսության զարգացումը պայմանավորված է անբարենպաստ գործոնների չեզոքացմամբ, սակայն ի տարբերություն քեյնսյան տեսության, որտեղ անբարենպաստ գործոն է համարվում խնայողության ավել մասը, մոնետարիստները որպես այդ գործոն համարում են շրջանառության մեջ գտնվող փողի ավելցուկը⁵:

Հետաքրքիր են նաև առաջարկի տեսության դրույթները հարկերի վերաբերյալ, որն առաջացել է XX դարի երկրորդ կեսին: Այս տեսության ներկայացուցիչներից են Մ. Բերնար, Ա. Լաֆերը, Ջ. Հիլդերը, Ռ. Լուկասը, Լ. Էրհարդը: Ըստ նրանց՝ հարկերի բարձր դրույքաչափերը տնտեսության վրա ունենում են բացասական ազդեցություն, նվազում է տնտեսական ակտիվությունը, ներդրումային միջավայրը դառնում է անբարենպաստ, որոնց հետևանքով կրճատվում են հարկային եկամուտները: Նրանք առաջարկում են հարկային արտոնությունների և դրույքաչափերի կրճատման միջոցով թեթևացնել հարկային բեռը, որը տնտեսական աճի զարգացման իրական երաշխիք է⁶: Ա. Լաֆերը փորձեց բացատրել հարկային դրույքաչափի և հարկային եկամուտների միջև եղած փոխադարձ կապը (գծապատկեր 1):

¹ Кейнс Дж.М. "Общая теория занятости, процента и денег", Москва, Прогресс, 1978, стр. 54, 156.

² Кейнс Дж.М. "Общая теория занятости, процента и денег", Москва, Прогресс, 1978, стр. 365-366.


³ Пансков В.Г. "Налоги и налогообложения в РФ", Москва, КноКнижный мир, 1999г., стр. 36-37.

⁴ Браунинг П. "Современные экономические теории - буржуазные концепции", сокр. пер. с англ., Москва, Экономика, 1987г., стр. 81.

⁵ Усоскин В. "Теория денег", Москва 1976г., Гл. 3.

⁶ Федосов В. "Современный капитализм и налоги", Киев, Высшая школа, 1987г., стр. 107.

հարկային
դրույքաչափ



Գծապատկեր 1

Այս գծապատկերը, որը հայտնի է «Լաֆերի կոր» անվամբ, ցույց է տալիս, որ հարկային դրույքաչափերի ավելացումը մինչև որոշակի սահման ավելացնում է հարկային եկամուտները (M կետ), սակայն այդ սահմանից հետո տեղի է ունենում հակառակ էֆեկտը, և հարկային եկամուտները սկսում են նվազել: Սա բացատրվում է այն փաստով, որ հարկային դրույքաչափերի ոչ խելամիտ ավելացումը տնտեսական ակտիվության անկման պատճառ է դառնում, որի հետևանքով կրճատվում է հարկման բազան: Այս ամենն էլ բերում է հարկային եկամուտների նվազեցման¹: Գծապատկերում հարկային դրույքաչափը հարկերի միջինացված ցուցանիշն է: Ա. Լաֆերի կարծիքով հարկի սահմանային չափը չպետք է գերազանցի եկամտի 30 տոկոսը, հակառակ դեպքում կտրուկ նվազում են հարկային եկամուտների ծավալները: Նա գրում է, որ «Հիմնարար գաղափարը, որն ընկած է կորի հիմքում, այն է, որ որքան բարձր են հարկային դրույքաչափերը, այնքան ավելի ուժեղ են անհատի մղումները հարկերի վճարումից խուսափելու նպատակով»²: Այսինքն, ըստ Լաֆերի, ստվերային տնտեսության առկայությունը և դրանց չափերը պայմանավորված են հարկադրույքների բարձր չափերով ու դրանց մեծացմամբ³: Առաջարկի տեսության գաղափարների կիրառման խթանման լավ օրինակ է եկամտահարկի դրույքաչափի կրճատումը, որը կհանգեցնի արտադրական ծախսերի նվազեցմանը, հետևաբար նաև աշխատավարձի բարձրացմանը:

Այս տեսությանն է անդրադարձել նաև գերմանացի տնտեսագետ և պետական գործիչ Լյուդվիգ Էրհարդը, որն իր «Բարեկեցությունը բոլորի համար» աշխատության մեջ անդրադառնում է հետպատերազմյան գերմանական տնտեսական հրաշքին, որի հիմնական խթաններից մեկն էլ հարկային բեռի թեթևացումն էր: Մասնավորապես, նա գրում է. «Եթե հաջողվի հասնել պահանջվող ծախսերի կայունացմանը, ապա արտադրողականությունը կզարգանա նույն տեմպերով: Եվ միայն այս եղանակով է հնարավոր իսկական և իրատեսական որոշումներ

¹ «Налоги», Под ред. Черника Д.Г., Москва 1996г., стр. 32.

² Кравченко И.А. «Налоговые реформы 80-х годов США. Социально-экономический аспект», Москва, НИФИ, 1989г., стр. 9.

³ Пепеляев С.Г. «Законы о налогах: элементы структуры», Москва, СВЕА, 1995г., стр. 37.

կայացնել հարկային հիմնախնդիրների կենսագործման առնչությամբ»¹: Ռուս տնտեսագետ Կորոլյովը գտնում է, որ հարկային բեռի նվազեցումն ապահովում է ազատ մրցակցություն, որի արդյունքում շեշտակիորեն աճում է աշխատանքի արտադրողականությունը: Վերջինս էլ հանգեցնում է գների նվազեցմանը²: Առաջարկի տեսությունը գործնական կիրառություն է ստացել 1980-90-ական թվականներին մի շարք զարգացած երկրներում, այդ թվում՝ ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, որոնք հարկային բեռի թեթևացման ճանապարհով կարողացան հասնել կապիտալի կուտակման ապահովմանը և գործարար ակտիվության բարձրացմանը:

Անդրադառնալով մասնաշաղկապի տեսության կողմնակիցների՝ հարկերին վերաբերող գաղափարներին: Նրանք՝ մասնավորապես Ի. Ֆիշերը և Ն. Կոլդորը, մեծ կարևորություն են տալիս հարկային խնդիրներին: Նրանք առաջարկում են հարկման օբյեկտները տարանջատել ըստ սպառման, այսինքն՝ հարկվի սպառվող ապրանքի միայն վերջնական արժեքը և ըստ խնայողությունների: Փաստորեն, այստեղից է ծագում սպառման հարկի գաղափարը: Ըստ այս տեսության կողմնակիցների՝ սպառողական հարկը մասնաշաղկապի տեսությունների խթանման, ինչպես մասնաշաղկապի դեմ պայքարի յուրատեսակ միջոց է³:

Նեոդասական տեսության հիմնադիրն է Ջ. Միդը: Նա հարկը համարում է տնտեսության կարգավորման համար ոչ կարևոր գործոն: Այս տեսության գաղափարախոսության հիմնական շեշտը դրվում է ազատ մրցակցության վրա, որն էլ ապահովում է կայուն տնտեսական գործընթացների իրականացում: Այն բացառում է ազատ տնտեսական մրցակցությանը խանգարող պայմանների առկայությունը, քանի որ, ըստ նեոդասականների, շուկան ինքնակարգավորվում է առանց պետության միջնորդության և ապահովում է տնտեսական հավասարակշռվածություն⁴: Այս տեսության հիմնական դրույթներից մեկն էլ այն է, որ տնտեսության պետական կարգավորումը պետք է ընթանա հարկային քաղաքականության դերի կրճատմանը և դրամավարկային քաղաքականության դերի բարձրացմանը զուգընթաց:

Հարկման մասնավոր տեսությունները առավել շատ ունեն գործնական ուղղվածություն և տալիս են հարկերի հաշվարկման գործնական մոտեցումներ:

Ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության տեսության համաձայն՝ հարկային համակարգը պետք է կառուցված լինի այնպես, որ նախապատվությունը տրվի ուղղակի հարկերին, քանի որ անուղղակի հարկերը վնասակար են և վատթարացնում են ժողովրդի վիճակը⁵: Շուկայական զարգացած տնտեսություն ունեցող երկրները, բացառությամբ Ֆրանսիայի, առաջնայնությունը տալիս են ուղղակի հարկերին՝ փորձելով բացառել հարկատուների միջև խտրականությունը և խթանել արդարացի ու հավասարաչափ հարկումը: Նույնը չի կարելի ասել Հայաստանի և շատ այլ զարգացող երկրների մասին, որտեղ հարկային եկամուտների գերակշռող մասն ապահովում են անուղղակի հարկերը:

Համամասնական և պրոգրեսիվ հարկման տեսության հիմքում ընկած է հարկազանձման տարանջատումը երկու եղանակի՝ համամասնական և պրոգրեսիվ: Այս տեսության ներկայացուցիչներից են Ա. Սմիթը, Ժ. Բ. Մեյը, Կ. Մարքսը, Ֆ. Էնգելսը: Համամասնական հարկման ժամանակ սահմանվում է կայուն դրույքաչափ՝ անկախ հարկվող օբյեկտի արժեքային մեծությունից: Ֆրանսիացի տնտեսագետ Ռ. Ստուրմանը գրում է. «Ով ոչինչ չունի, նրանից ոչինչ չվերցնել, ով քիչ ունի, նրանից քիչ վերցնել, ով շատ ունի, նրանից պետք է վերցնել ավելի շատ»⁶:

¹ Эрхард Л. "Благосостояние для всех", Москва 1991г., стр. 18.

² Королев А.Ю. "Экономическая реформа Эрхарда", Финансы 1992г., N3, стр.50-52.

³ Федосов В.М. "Современный капитализм и налоги", Киев, Высшая школа, 1987г., стр 120.

⁴ Осадчая И.М. "Современное кейнсианство", Москва, Мысль, 1971г., стр 127.

⁵ Селигмен Э., Струм Р. "Этюды по теории обложения", Санкт Петербург, 1908г., стр. 91.

⁶ Пушкарева В. "История финансовой мысли и политика налогов". Москва 1996г., стр. 93.

Պրոգրեսիվ հարկման գաղափարն առաջին անգամ ծագել է XVI-XVII դարերում Ֆլորենցիայում: Այն կիրառվել է գույքահարկի վրա՝ նպատակ ունենալով ծանրացնել հակաիշխանական սեփականատերերի հարկային բեռը: Ֆ. Էնգելսը գտնում էր, որ հարկ պետք է վերցնել այնտեղից, որտեղ ավելի շատ ավելցուկ կա¹: Այսօր պրոգրեսիվ հարկման մեխանիզմը կիրառվում է աշխարհի շատ երկրներում: Ընդհանրապես, ժամանակակից հարկային համակարգերը կիրառում են այս երկու մեխանիզմների փոխկապակցված տարբերակը՝ փորձելով հարկազանձումը կազմակերպել հնարավորինս արդար և արդյունավետ:

Միասնական հարկի տեսության հիմնական գաղափարն այն է, որ անհրաժեշտ է բոլոր հարկերը միավորել մեկ միասնական հարկի մեջ, որը, այս տեսության ներկայացուցիչների կարծիքով, կհեշտացնի հարկազանձման գործընթացը: Նրանք այն կարծիքին են, որ առավել նպատակահարմար է բազմաթիվ հարկատեսակների փոխարեն պարզ եղանակով կիրառել մեկ հարկատեսակ, որը կհեշտացնի հարկազանձումը և կշրջանցի տարբեր հարկադրույքների հետ կապված տարաձայնություններն ու դժգոհությունները: Սակայն միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ սրանք ընդամենը դասագրքային գաղափարներ են, և նրանց կիրառությունը զրեթե անհնար է:

Հարկային ծանրության բաշխման տեսության հիմնական գաղափարը հարկման գործընթացի համաչափ կազմակերպումն է: Սա ենթադրում է այնպիսի սկզբունքների մշակում և իրագործում, որ օրենքի առաջ բոլոր քաղաքացիները կրեն հավասարաչափ պատասխանատվություն: Այս տեսության ներկայացուցիչները կարևորում են հարկավճարումնականության գաղափարը՝ կողմնակից լինելով հարկվող եկամտի նվազագույն շեմի սահմանմանը, որի նպատակը մարդկանց նվազագույն կենսական պահանջմունքները բավարարելն է:

Ընդհանրացնելով այս ամենը՝ կարելի է եզրակացնել, որ բոլոր ժամանակներում էլ արդիական են եղել հարկման հետ կապված խնդիրները: Հարկային տեսություններն ամրնդհատ փոփոխվել են՝ կախված տվյալ ժամանակաշրջանում հասարակական-քաղաքական իրավիճակից, տնտեսական հարաբերությունների զարգացման մակարդակից, ազգային ավանդույթներից:

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՊԱՀ ասպիրանտ

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Միջազգային փորձը վկայում է, որ տարբեր երկրներում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում, առևտրային բանկերի վարկային պորտֆելի արդյունավետ կառավարումն ուղղակի կախվածության մեջ է գտնվում հաճախորդներից ներգրավվող դրամական և արտարժույթային միջոցներից (կամ այլ կերպ, ցպահանջ և ժամկետային պարտավորություններից), որոնք իրենց ուրույն տեղն ունեն վարկերի տրամադրման գործընթացում: Ընդհանուր առմամբ, առևտրային բանկերի ֆինանսական ռեսուրսները սեփական կապիտալի և պարտավորությունների ամբողջությունն է, որոնք գտնվում են բանկի տրամադրության տակ և օգտագործվում են ակտիվային գործառնությունների յուրահանգման համար:

Բանկերի պարտավորությունների հիմնական մասը կազմում են ավանդները, այսինքն՝ այն դրամական միջոցները, որոնք բնակչության և տնտեսավարող սուբյեկտների կողմից ներդրվում են առևտրային բանկերում:

¹ Пушкарёва В. "История финансовой мысли и политика налогов". Москва 1996г., стр. 99.